Վ. ԿՈՐՈԼԵՆԿՈ

ԳՆՎԱԾ ՏՂԱՆ

891.714
Կ-78

37-K
Ga 1663
891.715
Կ-78

Վ. ԿՈՐՈԼԵՆԿՈ

30 MAY 2011

ԳՆՎԱԾ ՏՂԱՆ

Թարգմ. Հ. Տ. ԱՎԱԳՅԱՆ

Նկարները
Վ. Պ. ՎԱՍԻԼԵՎԱՅԻ

ՊԵՏՀՐԱՏ
ՀԼԿՑԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ՑԵՐԵՎԱՆ 1937

24 MAY 2013

3853

ՓՈՔՐԱՀԱՍԱԿ ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Խմբագիր՝ Ռ. Զարյան
Տեխ. խմբագիր՝ Լ. Ոհանյան
Սրբագրիչ՝ Ռ. Նշանյան

Գլավլիտի լիազոր Կ—4535, հրատ. 3981
Գաղվեր 251, տիրաժ 3000
Գեհրատի տպարան, Երևան, II Կնունյանցի, 4

ՊԵՏ ԿՈՄ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС БИБЛИОТЕКА
ՀՍՍՌ-Арм ССР
Ա. ՍՄԲԱՏԻ ԱՆՎԱՆ
60747-67

Այն տունը, որի մեջ մենք ապրում էինք, գտնվում եր դեպի փոքրիկ հրապարակը տանող նեղ նրբանցքում։ Այդ հրապարակում միանում էին մի քանի փողոց, որոնցից յերկուսը տանում էին դեպի դերեզմանատուն։

Այդ փողոցներից մեկը կոչվում եր «խճուղի»։ Այդ փողոցով անցնում էին փոստատար սայլակները զանգակները կապած, և որովհետև, հենց այդտեղ եր վերջանում քաղաքի ամենամարդաշատ մասը, դրա համար էլ յերբեմն փոստատարները կանգնեցնում էին ձիերը և արձակում զանգակները։ Այդտեղից արդեն փոստը շարժվում եր զրընգոցով, որ աստիճանաբար թուլանում եր, անընդհատ հեռանալով ու նվազելով, մինչև որ սայլակն էլ, նույնպես անընդհատ փոքրանալով, դառնում եր մի փոքրիկ կետի չափ։

Յես ու յեղբայրս մեր նրբանցքի անկյունից կամ ցանկապատի վրայից հաճախ նայում էինք, թե ինչպես են անհայտանում հեռվում փոստի սայլակները, բարձր հրեական «բալագուլները», ծանրաշարժ հանրակառքերը, գյուղացիների սայլերը։

Այդ փողոցը քանի հեռանում, այնքան բարձրանում եր, այդ պատճառով էլ այն բոլորը, ինչ որ մոտենում եր քաղաքի կենտրոնին, կարծես գլորվում եր ներքև... Յեվ յես դեռ հիմա էլ հիշում եմ այն զարմանքի զգացումը, որ համակեց ինձ իմ ամենավաղ մանկության ժա-

մանակ, յերբ հորիզոնի յետևից դուրս յեկած փոքրիկ քառակուսի մի բիծ սկսեց մեծանալ, մոտենալ, և մի վորոշ ժամանակից հետո զորաստյունները բռնեցին ամբողջ փողոցը, լցնելով այն հազարավոր վոտքերի դոփյունով և նվագախմբի խլացուցիչ հնչյուններով։ Զինվորները գլխներին կլոր գդակիկներ ունեյին առանց հովարների և հագել եյին խիստ մաշված կարճլիկ բաճկոնիկներ։ Սպաների գլխներին կալին կոշտ կիվերներ իրենց փետրափընջերով և մետաղյա կոներով։ Նրանք բոլորը գնում եյին համաչափ, վոտք-վոտքի և ինչ-վոր խստասիրտ բան կար այդ համաչափ շարժման մեջ։

Բոլորն ասում եյին, վոր նրանք վերադառնում են «Սևաստոպոլի մոտ» մղած պատերազմից։

Խճուղով անցնում եյին նաև կալանավորներ, զընգացնելով իրենց շղթաները, իսկ մի անգամ էլ անց կացրին մի մռայլ մարդու «առևտրական պատիժ»* տալու համար։ Առջևով գնում եր զինվորների մի դասակ և չորս թմբկահարներ խոժոռ ու համաչափ թմբկահարում եյին... Թմբկահարների յուրաքանչյուր քայլին թմբուկները վեր եյին բարձրանում նրանց ձախ վոտքի վրա, բայց թմբուկների ձայնը հոսում եր առանց ընդհատվելու, նույնքան համաչափ ու չարագուշակ։ Նրանց յետևից գնում եր սայլը, վորի վրա դրված եր մի բարձր նստարան և այդ նըստարանի թիկնակին կապել եյին նրա վրա նստած մարդու դեպի յետ տարած ձեռքերը։ Նրա բաց գլուխը խիստ կախ եր ընկել ու տարուբերվում եր, յերբ կառքը ցնցվում եր սալահատակի վրա, իսկ կրծքին թեք կախված եր մի տախտակ վրան սպիտակ տառերով գրված։ Յեվ այդ ամբողջ մռայլ կերպարանքը բարձր եր լողում ամբոխի վրայով,

* «Առևտրական պատիժ»— այդպես կոչվում եր, ցարական Ռուսաստանի որենքներով, խարազանով պատժելը մարդաշատ առևտրական հրապարակներում, զանազան հանցաքների համար։

կարծես իշխելով մարդկային սրընթաց հոսանքին։ Սայլի յետևից գնում եր զինվորների մի դասակ և խիտ խռնված շարքերով վազում եր ժողովուրդը։ Մեզ, ինարկե հրապարակ չթողին, բայց սպասավոր Գանդիլոն, վոր այնտեղ եր վազել մարդկանց յետևից, մեծ վոգևորությամբ պատմում եր հետո խոհանոցում, թե ինչպես դահիճը պառկեցրեց «մարդասպանին» պատժարանի վրա դրված իշոտնուկի վրա, ինչպես ծգում-բացում եր մարակը և դրա հետ իբր թե ասում.

— Հայրդ ու մայրդ քեզ չեն խրատել, դե յես կխրատեմ քեզ։

Հետո բացականչում եր՝ «Զգույշ, կվառեմ», և ապա ամբողջ հրապարակով մեկ լսվում եր մարակի շաչյունը և պատժվողի անբնական գոռոցը։ Մեր ծառայող կանանցից շատերը նույնպես բացականչում եյին ու խաչակընքում յերեսները։

Ընդհանրապես շատ հետաքրքիր, նոր և յերբեմն սարսափելի բաներ եյին շարժվում այդ յերկար, ուղիղ խճուղով...

Մեր բակը հարմար ու խաղաղ բակ եր։ Մեծ փողոցներից նա անջատված եր յերկու քարե տներով։ Այդ քարաշեն տներից մեկում ապրում եյին մեր տան տերերը, վորոնց բնակարանն ու կահավորումը չափազանց ճոխ և հարուստ եյին թվում ինձ։ Դարբասը բացվում եր նըրբանցքի վրա և նրա վրա ցածը կախված իրեն հին, արծաթագույն կաղամախու խիտ ճյուղերը։ Տանտիրոջ սայլակի կառապանը, վոր իր գորշ լիվրեյով շատ նշանավոր տեսք ուներ, դարբասից ներս մտնելիս ամեն անգամ ստիպված եր խիստ կռանալ վորպեսզի, ճյուղերը վայր չգցեն նրա բաֆթայավոր ժապավենով ու հանգույցով բարձր գդակը։ Մեր կողաշենքը կանգնած եր բակի խորքում, և մի կողմից միանում եր քարե տանը, իսկ նրա մյուս կողմից ձգվում եր խիտ այգին։

Մեր բակի կյանքը խաղաղ եր անցնում, միանգամ ընդմիշտ սահմանված կարգ ու կանոնով։ Իմ մեծ յեղբայրը յերկուս ու կես տարով մեծ եր ինձնից, իսկ փոքրը հազիվ մի տարով եր փոքր։ Յեվ դրանից եր, վոր, բնականաբար, փոքր յեղբորս հետ մենք սաստիկ մոտիկ ելինք։ Վեր ելինք կենում մենք շատ վաղ, յերբ յերկու տներն ել դեռ պինդ քնած ելին լինում։ Միայն ախոռում ձիապանները մաքրում ելին ձիերին ու տանում նրանց դեպի ջրհորը։ Յերբեմն մեզ թույլ ելին տալիս բռնել նրանց սանձերից, և այդ վստահությունը սաստիկ բարձրացնում եր մեզ մեր սեփական աչքում։

Ձիապաններից հետո արթնանում ելին աղախիններն ու գնում սարայ՝ փայտ բերելու։

Ժամն ութ անց կես բերում ելին հորս բրիչկան և նա գնում եր ծառայության։ Այդ կրկնվում եր ամեն որ և մեզ բնության որենք եր թվում...

Յուրաքանչյուր առավոտ տանտիրոջ քարե տան նկուղային հարկի անկյունի սենյակում, վորոշված ժամին անփոփոխ տեղի յեր ունենում միևնույն յերևույթը։ Սկզբում ցնցվում եր ծածկափեղկի յերկաթյա փականը և մեկը ներսից դուրս եր հրում բոլտը, վորով ծածկափեղկերը փակվում ելին գիշերը։ Յերկաթյա շերտը, կարծես կենդանացած, յետ եր քաշվում, հետո զրնգալով վայր ընկնում, և այդ ժամանակ ինչ վոր մեկի ձեռքն ոդանցքի միջով վերջնականապես բացում եր ծածկափեղկերը։ Դրանից հետո ինքը լուսամուտն ել, վոր գետնի հետ հավասար եր, բացվում եր և նրա մեջ հայտնվում եր գիշերային թասակով ծածկված մի մարդու գլուխ։

Դա մի տնվոր եր, հասակավոր ամուրի մի մարդ,— պան Ուլյանիցկին։ Նա դուրս եր հանում իր փոքրիկ մորուքով և սապատավոր քթով սուր պրոֆիլը և անհանգիստ հայացք եր գցում մեր կողաշենքի լուսամուտների վրա։

Մեծ մասամբ մեր ծածկափեղկերը դեռ փակ ելին լինում։ Համոզվելով այդ բանում, պան Ուլյանիցկին նորից սուզվում եր իր սենյակի խորքը և շուտով լուսամուտի գոգին արդեն ամբողջովին յերևում եր նրա փոքրիկ, չոր կերպարանքը, գիշերային թասակով և խայտաբղետ խալաթով, վորի տակից յերևում ելին տակի սպիտակեղենն ու հողաթափները՝ բոբիկ վոտքերին։

Մենք գիտեինք, վոր նրա անհանգիստ հայացքները վերաբերում են գլխավորապես մեր տանը՝ նա չեր ուզում, վոր իր առավոտվա կիսահագուստով նրան տեսնի մեր հորաքույրներից մեկը, վորին նա յերբեմն ուղեկցում եր յեկեղեցի։ Ուլյանիցկու կերպարանքն այդ առավոտվա ժամին իսկապես վոր շատ անդուրեկան տեսք եր ունենում, խալաթը ճմլված ու կորտված, հողաթափները մաշված, սպիտակեղենը՝ կեղտոտ, իսկ բեխերը՝ խռիվ։

Նորից սուզվելով իր սենյակի մեջ, պան Ուլյանիցկին սկսում եր իրեն կարգի բերել։ Դա մի բարդ և յերկարատև արարողություն եր, առանձնապես սափրվելու գործողությունը, վոր հիշեցնում եր մի սրբազան արարողություն։ Մենք իրավունք ելինք վայելում այդ ժամանակ կանգնել դուրսը՝ բաց լուսամուտի առջև, իսկ մեր յետևից մեկ մեկ ել նայում եր քրոջս փոքրիկ յերեսը։ Պան Ուլյանիցկին վոչինչ չուներ դրա դեմ և միայն, յերբ սկսում եր սափրվել, զգուշացնում եր մեզ, վոր հանգիստ մնանք, վորովհետև կանոնների մի փոքրիկ խախտումն այդ կարևոր ըսպելին, վանդ և սպառնում նրա կյանքին։

Մենք սրբությամբ կատարում ելինք այդ պայմանը և կրիտիկական ըսպելին, յերբ պան Ուլյանիցկին, բռնելով իր քթի ծայրից ու լեզվով թուշը ներսից ուռեցնելով, զգուշությամբ շարժում եր ածելին, այնպես, վոր բեխերը չվնասի, կամ յերբ սափրում եր մորուքը կոկորդի մոտ, մենք աշխատում ելինք նույնիսկ շունչներս պահել

մինչև վոր նա վերջին անգամ սրբում եր ածելին և հավաքում ածլասարքը։ Դրանից հետո նա լվացվում եր, վիզն ու այտերը մոլեգնաբար տրորում սրբիչով, պուդրի յեր քսում յերեսին, ֆիքսատուարում եր ու ձգում բեխերի ծայրերն և ապա անցնում շիրմայի յետևը։ Քառորդ ժամ հետո նա դուրս եր գալիս այնտեղից արդեն անհանաչելի, յասամանի գույնի կարճ անդրավարտիկով, լաքած կոշիկներով, բաց գույնի ժիլետով և կլորացրած ֆալդերով կապույտ սերթուկով։ Նրա յերեսն ել կարծես թե կոկված եր լինում՝ տրորվածությունն ու կնճիռներն անհայտանում ելին։ Այդպիսի նորոգված տեսքով նրա յերևալը մեզ վրա միշտ ուժեղ տպավորություն եր գործում, և նրան այդ դուր եր գալիս։ Յերբեմն, կոճկելով իր սիրունիկ սերթուկի վերջին կոճակը, նա նայում եր մեզ պարզ նկատելի ինքնագոհությամբ և ասում.

— Հը՞, վոնց, ինչ...

Մեր հարաբերությունները պան Ուլյանիցկու հետ այդ ժամանակ շատ լավ ելին։ Նա ծիծաղելի յեր թվում իր այծի մորուքով և կարճ, նեղլիկ անդրավարտիք հագած բարակ տոտիկներով։ Բայց այդ բոլորն անվնաս բաներ ելին, իսկ ամենորյա նորոգման գործողությունն առաջացնում եր վոչ միայն բնական հետաքրքրություն, այլ և վորոշ պատկառելի զարմանք։

Սակայն վորոշ ժամանակ անցած՝ մեր հարաբերությունները պան Ուլյանիցկու հետ փչացան։

Մի գեղեցիկ որ նա գտավ, վոր իր համար այնքան ել հարմար չի ծառա չունենալը։ Այդ բանն ի նկատի ունենալով՝ նա իրեն ծառա վարձեց տանտիրոջ աղախնի տղային, Պետրիկին։ Աղախինը, «պանի Ռիմաշևսկայան», վորին անվանում ելին Լյուբա, շատ հաստ և ճղճղան կին եր։ Առհասարակ նրա մասին ասում ելին, թե դա կին չե, այլ գև է։ Իսկ նրա տղան հանդարտ տղա յեր ծաղկա-

Նա նայում եր մեզ պարզ նկատելի ինքնագոհությամբ և ասում.
— Հը՞, վոնց, ինչ...

տար, գունատ յերեսով, և բացի այդ տառապում եր քայքայիչ ջերմախտով։ Սաստիկ ժլատ Ուլյանիցկին ածան գնով եր վարձել նրան, և տղան ծառայության մտավ անկյունի սենյակում։

Վերջացավ այդ մեծ խայտառակությամբ։ Մի գեղեցիկ որ Լյուբան, ձեռքերը կողքին կանթած, հայհոյում եր Ուլյանիցկուն ամբողջ բակով մեկ և բղավում, վոր նա իր տղային կարող ե պաշտպանել, վոր սովորեցնել, իհարկե, կարելի յե, բայց վոչ այդպես... «Այ, նայեք, բարի մարդիկ, ամբողջովին կապտեցրել ե տղի մեջքը»։ Յեվ դրա հետ Լյուբան այնպես կատաղաբար վեր քաշեց Պետրիկի շապիկը, վոր նա ճչաց ցավից, կարծես նրա ձեռքերում վոչ թե իր տղան եր, այլ ինքը Ուլյանիցկին։

Վերջինս նստել եր իր սենյակում, և դուրս չեր գալիս բարկացած կնկա դոռդոռոցներին, իսկ մյուս որն ելի յերևաց լուսամուտի գոգում։ Հաղնվելու ժամանակ նա մեզ բացատրեց, վոր Պետրիկը—վատ, վատ, վատ տղա յե։ Յեվ նրա մայրն ել ստոր կին ե... և վոր նա հիմար ե, իսկ նա, Ուլյանիցկին «կճարի իր համար մի ուրիշ տղա, ավելի լավը»։ Նա բարկանում եր, կրկնում խոսքերը և նրա այծի մորուքը տմբտմբում եր բավական արտահայտիչ կերպով։

Շուտով նա ժամանակավորապես գնաց գյուղ, վորտեղ դեռ կենդանի յեր նրա ծերունի հայրը, և յերբ վերադարձավ, նրա յետևից գալիս եր մի սալլ գյուղական զանազան մթերքներով լիքը, իսկ սալլի վրա նստած եր 10-11 տարեկան մի տղա, կարճլիկ կուրտկայով, թուխ դեմքով և կլոր աչքերով, վոր վախեցած նայում ելին իրեն անծանոթ շրջապատին։ Այդ որվանից տղան բնակվեց Ուլյանիցկու սենյակում, մաքրում եր, ջուր բերում և ամանները ձեռքին գնում ճաշարան՝ ճաշ բերելու։ Նրա անունը Մամերա եր, կամ փաղաքշական՝ Մամերիկ, և շուտով բակում

հայտնի յեղավ, վոր դա վորբ ե և այն ել ճորտ, վորին չգիտես հայրն եր նվիրել Ուլյանիցկուն, թե ինքն եր գտել իր համար վորևե կալվածատիրոջից։

Յես բացարձակապես չեմ հիշում, վոր «տղա գտելու» միտքն ինքն ըստ ինքյան վորևե գիտակցական բողոք կամ դժգոհություն առաջացներ իմ մեջ։ Բայց, համենայն դեպս, այդ հանգամանքը նորեկին հետաքրքիր առարկա եր դարձնում, վորովհետև մենք ամեն տեսակի տղաներ տեսել ելինք, իսկ գտված տղա դեռ վոչ մի անգամ չելինք տեսել։ Յեվ դրա հետ, սակայն, մի ինչ վոր անորոշ բան այնուամենայնիվ շարժվում եր մեր մեջ։

Դժվար եր ծանոթություն հաստատել գտված տղայի հետ։ Նույնիսկ այն ժամանակ, յերբ պան Ուլյանիցկին գնում եր ծառայության, նրա տղան փակվում եր սենյակում և դուրս եր գալիս միայն խիստ անհրաժեշտության դեպքում՝ աղբը դուրս տանելու, ջուր բերելու, ճաշ բերելու համար։ Յերբ մենք պատահած դեպքում մոտենում ելինք նրան և խոսեցնում, նա դայլի ձագի պես եր նայում, վախվորած ցած եր գցում իր սև, կլոր աչքերը և աշխատում շուտ հեռանալ, կարծես մեզ հետ խոսելը նրա համար մի մեծ վտանգ եր ներկայացնում իրենից։

Կամաց-կամաց, սակայն, մոտիկությունն սկսվում եր։ Տղան դադարեց աչքերն իջեցնել, կանգ եր առնում, կարծես խոսակցելու ցանկությունը գալթակղեցնում եր նրան, կամ ժպտում եր, մեր մոտից անցնելիս։ Վերջապես, մի անգամ, հանդիպելով մեզ տան անկյունի յետևը, նա կեղտոտ դույլը դրեց գետին և մենք սկսեցինք խոսել իրար հետ։ Հասկանալի յե, վոր ամենից առաջ մենք սկսեցինք հարցնել, թե՝ «անունդ ինչ ե», «քանի տարեկան ես», «վորտեղից ես յեկել» և այլն։ Տղան հարցրեց մեզ իր հերթին, թե մեր անունն ինչ ե և... մի կտոր հաց խնդրեց։

Շուտով մենք բարեկամացանք։ Ուլյանիցկին վերադառնում եր միշտ վորոշված ժամին, լարված մեքենայի նման, և մենք կարող եյինք նույնիսկ մտնել նրա սենյակը, առանց վախենալու, թե նա կբռնի մեզ սենյակում։ Միաժամանակ մենք իմացանք, վոր մեր հարևանը ճիշտ վոր շատ չարասիրտ ժլատն է և սիրում է տանջել։ Նա չի կերակրում Մամերիկին, այլ միայն լիզել է տալիս դատարկ ամանները և կրծել հացի կեղևները, և արդեն յերկու անգամ սաստիկ դնքսել է նրան առանց վորևե հանցանքի։ Վորպեսզի տղան զուր չնստի ու ժամանակ չանցկացնի զանազան կապը կտրածների հետ (մենք գլխի ընկանք, վոր այդ հաճելի անվան տակ Ուլյանիցկին ի նկատի ուներ մեզ), նա նրան պատվիրում է փետուր քաշել բարձերի համար և քաշված փետուրը ծախում է։ Մենք հաց եյինք բերում Մամերիկին, վոր նա ուտում եր մեծ ագահությամբ։

Յեվ տխուր սև աչքերի հայացքները, և՛ նրա թուխ դեմքի տխուր արտահայտությունը, և՛ իր պատմածները, և՛ այն ագահությունը, վորով նա հարձակվում եր մեր բերած ուտելիքի վրա,— այդ բոլորը մեզ ներշնչում եր ինչ վոր հուզիչ, սուր խղճահարություն դեպի գնված տղան և չարություն՝ դեպի նրա տերը։ Յեվ այդ չարությունը մի առավոտ արտահայտվեց մեր կողմից։

Խեղճ Մամերիկին ինչ վոր հանցանք եր գործել և դեռ նախընթաց որը նրան տանջում եր այն նախազգացումը, վոր պանն անպատճառ ծեծելու յե իրեն։ Առավոտյան Ուլյանիցկին դուրս յեկավ շիրմայի յետևից վոչ իր սովորական ինքնագոհ փայլով, այլ նրա յերեսին ինչ վոր խորհրդավոր արտահայտություն կար։ Նա առանց սերթուկի յեր, իսկ ձեռքերը պահել եր յետևը։ Կանգ առնելով շիրմայի մոտ՝ նա կանչեց Մամերիկին և հրամայեց նրան ինչ-վոր՝ բան բերել։ Բայց հենց վոր տղան յերկչոտ կերպով մոտեցավ, Ուլյանիցկին կատվի արագությամբ

բռնեց նրան, կռացրեց, սեղմեց գլուխն իր ծնկերի արանքում, իջեցրեց անդրավարտիքը և ոդում սուլեց ճիպոտների փունջը։ Մամերիկը հուսահատ ճչաց ու սկսեց նետվել դես ու դեն։

Մեր ընտանիքում առհասարակ փափուկ վերաբերմունք կար դեպի իրար, և մենք դեռ յերբեք չեյինք տեսել այդպիսի դաժան պատիժ։ Մենք լուսամուտի առջև նույնպես ճչոց բարձրացրինք, թփթփացրինք վոտներս և սկսեցինք հայհոյել Ուլյանիցկուն։ Բայց Ուլյանիցկին ավելի ու ավելի յեր կատաղում։ Նրա դեմքը վատ արտահայտություն ստացավ, աչքերը դուրս եյին ընկել, բեխերը կատաղաբար ցցվել եյին և ճիպոտներն անընդհատ սուլում եյին ոդում։

Շատ հավանական եր, վոր մեր լացը կփոխվեր հիստերիկայի, բայց այդտեղ մեզ համար անսպասելի մի դեպք տեղի ունեցավ։ Ուլյանիցկու լուսամուտին ծաղկամաններ կային, վորոնք նա մեծ հոգատարությամբ խնամում եր։ Ամենից ավելի մոտիկ կանգնած եր նրա սիրելի հափրուկը։ Ինչ վոր հանկարծակի վոգևորության մեջ, մեր փոքրիկ քույրիկը վերցրեց հափրուկն ու ամանի հետ միասին դցեց հատակի վրա։ Ամանը ջարդվեց, հողը ծաղկի հետ միասին դուրս թափվեց։ Պան Ուլյանիցկին մի ակընթարթ անշարժացավ, հետո թողեց Մամերիկին և մեզ համար անսպասելի կերպով նրա կատաղած յերեսը յերևաց լուսամուտում։ Մենք գրկեցինք քրոջս ու սկսեցինք փախչել դեպի մեր պատշգամբը, վորտեղ և նստեցինք, զգալով մեզ անվտանգ մեր սահմաններում։ Պան Ուլյանիցկին, իսկապես, կանգ առավ իր լուսամուտից վոչ հեռու և, ճիպոտները յետևը պահած՝ սկսեց մեզ կանչել քաղցր ձայնով, խոստանալով տալ մեզ մեկական կանֆետ իբրև հաշտության նշան։ Բայց խորամանկությունը չափազանց ակնհայտ եր և մենք մնացինք մեր տեղը, բավական սառնասիրտ նայելով նրա խորամանկ շարժ ու ձևին...

Այդ նույն որը, կամ առհասարակ դեպքից անմիջապես հետո մի տոն որ, մենք մորս ու հորաքրոջս հետ գնում ելինք փողոցով և մեզ մոտեցավ պան Ուլյանիցկին։ Նա հագնված եր, ինչպես միշտ, պճնասիրաբար, նրա կոշիկները փայլում ելին շլացուցիչ փայլով, բեխերի ծայրերը ցցվել ելին յերկու մետաղալարի նման և սերթուկի ողում մի ծաղիկ կար։ Յերբ նա մոտենում եր, իմ սիրտը մի փոքր թրթռաց, վորովհետև յես հավատացած ելի, վոր նա կդանդատվի մորս մեր ցույցի համար։ Բայց խիստ զարմացանք, վոր նա վոչ միայն չդանդատվեց, այլ և բռնեց մեզնից մեկի ծնոտն ու սկսեց կեղծ-քաղցրավուն ձայնով գովաբանել մորս առաջ «սիրելի ճուտիկներին», վորոնց հետ նա շատ բարեկամական հարաբերությունների մեջ է։

Այդ անհաջող վարմունքը նախ մեզ մեծ արհամարանք ներշնչեց, և յերկրորդ՝ մեզ ցույց տվեց, վոր մի ինչ-վոր պատճառով Ուլյանիցկին թագցնում է մորից մեր միջև պատահած ընդհարումը։ Իսկ յեթե թագցնում է, ուրեմն և մեղավոր է ճանաչում իրեն։ Այդ կողմից մենք մեզ բոլորովին ապահով համարեցինք, և մեր ու Ուլյանիցկու միջև սկսվեց մի պատերազմ։

Յերեխաները յերբեմն զարմանալի դիտունակություն են ունենում և զարմանալի կերպով ոգտագործում են այն։ Պան Ուլյանիցկին շատ տարորինակություններ ուներ. նա ժլատ եր, չեր կարող տանել, յերբ իր սենյակում և սեղանի վրա առարկաների տեղերը փոփոխվում ելին և վախենում եր կտրող գործիքներից։

Մի անգամ, յերբ նա ամբողջովին խորասուզված եր սափրվելու գործողության մեջ և, քթի ծայրից բռնած, լեզվով դուրս եր հրել սափրվող այտը, մեծ յեղբայրս ողանցքի միջով յետ արեց լուսամուտի փականը, զգուշությամբ իջավ սենյակն ու բացեց մուտքի դուռը։ Այդպիսով, ապահովելով իր նահանջի ճանապարհը, նա սկսեց ինչ-վոր

Լուսամուտի առաջ կանգնած, մենք սարսափած սպասում ելինք, թե ինչ պիտի լինի։

վայրենի պար պարել սենյակի մեջտեղում՝ ցատկոտում եր, ծռմռվում, վոտքերը գցում գլխից վերև և բղավում վայրենի ձայնով՝ «Հոպ, շրրփ, տա նա նա»...

Լուսամուտի առաջ կանգնած մենք սարսափած սպասում ելինք, թե ինչ պիտի լինի։ Բայց մենք խիստ զարմացանք, յերբ տեսանք, վոր չարաբաստիկ ասպետը չի շարժվում տեղից։ Նրա յերեսի վրա վոչ մի մկան չշարժվեց։ Նա նուշնպիսի հոգատարությամբ բռնել եր քթի ծայրից, ածելելով բեխերի շուրջը, և նույն ձևով ուռեցնելով իր այտը։ Այդ ժամանակ, տեսնելով, վոր ածիլվելու արարողությունը դեռ նոր ե սկսվել, յես ու փոքր յեղբայրս մտանք սենյակ և միացանք մոլեգին պարին։ Դա մի ինչ վոր մանկական կատաղություն եր՝ հատակի վրա ելին նետվում աթոռները, կախարանի վրայի շորերը, խոզանակները։ Մամերիկը սարսափած նայում եր այս աշխարհի վախճանին իր անմիտ չռած կլոր աչքերով։ Միայն պան Ուլյանիցկին լիակատար սառնասրտություն եր պահպանում, անձեռոցիկը կապած կրծքին մինչև վիզը, ածելին ձեռքին և դեպի փոքրիկ հայելին թեքած աչքերով։ Յեվ միայն ամենորյա ճշտապահությամբ վերջացնելով սափրվելը և զգուշությամբ դնելով ածելին պատյանի մեջ, նա հանկարծակի պոկվեց տեղից ու վազեց դեպի ճիպոտները։ Մեծ յեղբայրս ծլկվեց դեպի բաց դուռը, իսկ մենք յերկուսով, վախեցած կատուների նման, թռանք դեպի լուսամուտը։ Յես արդեն պատուհանի գոգումն ելի, յերբ ճիպոտները սուլեցին հենց իմ ականջի մոտ և առանց ցավեցնելու սահեցին մեջքիս վրայով...

Այդ որվանից պան Ուլյանիցկին սափրվելու պատրաստվելիս, խիստ հոգատարությամբ ծածկում իր լուսամուտները։ Բայց փեղկերը հին ելին, իսկ փականները վատ ամրացված։ Տեսնելով, վոր Ուլյանիցկին արդեն սկսել ե սափրվել, մենք համարձակ մոտենում ելինք լուսամուտին, մի փոքր յետ անում ոդանցքը, և գոյացած ճեղքից ներս տանելով բարակ փայտիկներ, նրանց ծայրով վայր ելինք գցում փականները։ Ինչով բացատրել այդ, յես չգիտեմ, յերևի նրանով, վոր նա վախենում եր կարող գործիքներից, բայց յերբ ածելին ձեռքն եր առնում, Ուլյանիցկին արդեն չեր կարողանում ընդհատել դժվար գործը մինչև վերջացնելը։ Յերբ մենք փորձում ելինք ավազակաբար ներս մտնել նրա սրբավայրը, նա միայն թեքում եր մի աչքը և նրա սառած յերեսին յերևում եր տագնապալից բարկության արտահայտությունը։

Յերբ մեզ հաջողվում եր բացել փականը, լուսամուտն աղմուկով բացվում եր և ծեր ասպետի սենյակում սկսվում եր վայրենիների պարը։

Մի առավոտ պան Ուլյանիցկին նորից յերևաց լուսամուտի մեջ, և ապա, մոտենալով մեր պատշգամբին, ու ինչ-վոր առանձին ձևով դիտելով մեր յերեսները, նա սկսեց հավատացնել, վոր նա, ճիշտն ասած, շատ, շատ ե սիրում թե մեզ և թե իր սիրելի Մամերիկին, վորի համար նա նույնիսկ ուզում ե մի նոր կապույտ կուրտկա կարել տալ, պղնձե կոճակներով, և խնդրում ե, վոր մենք նրան ուրախացնենք այդ լուրով, յեթե վորևե տեղ պատահաբար հանդիպենք նրան։

Բանից դուրս յեկավ, վոր գնված տղան անհայտացել եր։

Միևնույն որը փոքր յեղբայրս խորհրդավոր կերպով դուրս կանչեց ինձ սենյակից և տարավ ցախատուն։ Այնտեղ մութ եր, բայց յեղբայրս համարձակ առաջ գնաց և, կանգ առնելով մեջտեղում, շվացրեց։ Սկզբում ամեն ինչ լուռ եր, հետո մի բան շարժվեց անկյունում, ցախերի արանքում, և մեր առաջն յելավ Մամերիկը։ Բանից դուրս յեկավ, վոր նա փայտի կույտի և պատի արանքում մի քնի նման բան ե սարքել իր համար և արդեն յերկու որ

60247-79

ՊԵՏ ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГСС Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
Ա. ԱՄ. Ա. Մյասնիկյանի անվան

և, ինչ ապրում է այդտեղ։ Նա ասում էր, վոր ապրել «վոչինչ, կարելի յե», միայն ուտել է ուզում և գիշերներն սկզբում մի քիչ վախենում էր։ Հիմա սովորել է։ Յերբ մենք հաղորդեցինք նրան, թե Ուլյանիցկին սիրում է նրան և ուզում է կուրտկա գնել, նա վճռականորեն պատասխանեց.

— Չեմ գնա։ Կընկնեմ ջրաղացի տակը կխեղդվեմ, չեմ գնա։

Այդ որվանից մենք ունեցինք մեր գաղտնիքը։ Յերեկոները մենք Մամերիկի համար ուտելու բան ելինք բերում և միասին դուրս գալիս զբոսնելու բակի մեկուսի անկյուններում։ Դա շարունակվում էր դեռ մի քանի որ էլ, մինչև վոր մայրս նկատեց մեր խորհրդավոր փսփսոցները։ Նա ամեն ինչի մասին մեզնից հարց ու փորձ արեց և պատմեց հորս։ Տղայի վիճակով հետաքրքրվեցին մեծերը և պան Ուլյանիցկուն կանչում ելին ինչ վոր բացատրություններ տալու, նույնիսկ վերև, տանտիրուհու, պանի Կալյանովսկու մոտ։ Մենք հոգատարությամբ պահպանում ելինք ապաստարանի գաղտնիքը, վորովհետև շատ պինդ յերդվել ելինք, վոր այդ գաղտնիքը վոչ վոքի չենք հայտնի աշխարհիս յերեսին։ Այդ պատճառով էլ, յերբ վերևում անձնատուր լինելու պայմանները մշակվեցին, ապա բանակցությունները շարունակվեցին մեր միջոցով, Մամերիկը վերջապես, վճռեց անձնատուր լինել, իսկ Ուլյանիցկու իշխանությունը սահմանափակված էր հասարակական կարծիքով։ Ամբողջ բակին հայտնի յեր, վոր պանի Կալյանովսկայան սպառնացել էր Ուլյանիցկուն «վռնդել անկյունի սենյակից»։

Մի քանի ժամանակից հետո, սակայն, նա ինքն էլ հանկարծակի գնաց ինչ վոր տեղ։ Գնված տղան ընդմիշտ անհայտացավ ինչ-վոր տեղ, լայնարձակ, անհայտ աշխարհում և նրա հետագա վիճակը մեզ անհայտ մնաց։

ՊԵՏ. ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГСС Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
Ա. ՍԱՄ Ա ... ԵՐԵՎԱՆ

«Ազգային գրադարան»
NL0392295

394
3853
1663

ԳԻՆԸ 60 ԿՈՊ.

ԱԴ
ԱԴ

В. КОРОЛЕНКО

КУПЛЕННЫЙ МАЛЬЧИК

Гиз Арм. ССР, Ереван, 1937 г.